**«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ**

**(հունվար-հունիս 2026թ)**

**1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿԶԱՊԿ) գնահատում**

*2026թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում Ստեփանավանի ՏՄԱԿ-ի կողմից տարածաշրջանի 24 դպրոցներում 97 սովորողներ /64տղա,33աղջիկ/ և 7 ՆՈՒՀ-երում 13 սաներ /11տղա,2աղջիկ/անցել են համապատասխանաբար ԿԱՊԿ և ԿԶԱՊԿ գնահատումներ: 110 /75տղա,35 աղջիկ/ սովորողների կրթական կարիքի գնահատումներն ըստ տարիքի հետևյալն են.*

- *ԿԱՊԿ առաջին անգամ գնահատում անցած 6-18 տարեկան 19 սովորող:*
- *ԿԱՊԿ կրկնակի գնահատում անցած 6-18 տարեկան 78 սովորող:*
- *ԿԶԱՊԿ առաջին անգամ գնահատում անցած 3-5 տարեկան 4 սովորող:*
- *ԿԶԱՊԿ կրկնակի գնահատում անցած 3-5 տարեկան 9 սովորող:*

*Գնահատման տվյալները մուտք են արվել գնահատման բազա:Գնահատումներին զուգահեռ տրվել են խորհրդատվություններ դպրոցի մասնագետներին ,ուսուցիչներին, ծնողներին:*

**2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում**

*2026թ-ի հաշվետու ժամանակահատվածում Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի 34 դպրոցներում սովորել ու մանկավարժահոգեբանական աջակցության*

ծառայություններ են ստացել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող թվով 309 սովորողներ /195 տղա,114 աղջիկ/: Տարածաշրջանի 14 մանկապարտեզներում սովորել ու մանկավարժահոգեբանական աջակցություն են ստացել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող թվով 40 սաներ, /29 տղա,11 աղջիկ/:.

- ՏՄԱԿ-ի կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ են ստացել 345 երեխա,որից 4-ը՝ տնային պայմաններում

- Միայն ուսումնական հաստատությունների կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ են ստացել 4 երեխա

Հաշվետու ժամանակահատվածում ՏՄԱԿ-ի կողմից մատուցված մասնագիտական ծառայությունները սովորողների քանակով ըստ տեսակի հետևյալն են.

- Հատուկ մանկավարժի ծառայություններ ստացած 312 երեխա
- Հոգեբանի ծառայություններ ստացած 57 երեխա
- Լոգոպեդի ծառայություններ ստացած 172 երեխա
- Սոցիալական մանկավարժի ծառայություններ ստացած 113 երեխա
- Սուրդոմանկավարժի ծառայություն ստացած 9 երեխա

## 3. Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ

ՏՄԱԿ-ի կողմից 2026թ-ի հաշվետու ժամանակաշրջանում տարածաշրջանի 42 դպրոցներում և 13 ՆՈՒՀ-երում իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | Սովորողների հոգեկան զարգացման առանձնահատկությունները: | 30 |
| 2 | Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ | 17 |
| 3 | Ծնող լինելու մարտահրավերները | 17 |
| 4 | Կրթությանն աջակցող միջոցներ, մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ | 679 |
| 5 | Թվային կախվածություն, սահմանափակումներ. Ինչպես աջակցել երեխաներին առողջ վարք ձևավորելու | 12 |
| 6 | Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության,հոգեսոցիալական և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման ծրագրեր | 153 |

արդյունավետության ապահովում

- Ներառիչ հարմարեցումների ձևավորում և կիրառում
- Հոգեհուզական ինքնակարգավորման,հաղորդակցական առաջին օգնության տարրական կանոնների տիրապետում
- Սովորողների բացասական վարքային դրսևորումների վերահսկում,դրական վարքագծի ամրապնդում,կանոնակարգերի մշակում
- Սովորողների ագրեսիվության հաղթահարման միջոցների կիրառում
- Դասարանում տարվող աշխատանքների կազմակերպում և ճիշտ պլանավորում
- Սովորողի ուժեղ և թույլ կողմերի վերհանում
- ԿԱՊԿ ունեցող սովորողների գնահատման մեթոդաբանություն
- <<Լույսի շրջանակներ>>խաղ-մեթոդի կիրառումը ՆՈՒՀ-երի ծնողների համար

Խորհրդատվությունները իրականացվել են և ուսումնական հաստատություններում, և կենտրոնում: Պարբերաբար տարածաշրջանի ուսումնական հաստատությունների տնօրեններին, տնօրենի տեղակալներին, բազմամասնագիտական թիմերի անդամներին, ուսուցիչներին,ուսուցչի օգնականներին,ծնողներին տրվել է կենտրոնի գործունեության և ոլորտի իրավական ակտերի,գործառույթների ընթացակարգերի կամ կիրառվող ձևանմուշների փոփոխությունների վերաբերյալ լրացուցիչ խորհրդատվություններ: Իրականացված խորհրդատվություններից օգտվել է 455 անձ /392-ը՝ դպրոցներում,63-ը՝ ՆՈՒՀ-երում :

Տրամադրված խորհրդատվությունների ընթացքում ունեցել ենք բազմաթիվ հաջողված արդյունքներ,որոնք նպաստել են երեխայի ինքնագնահատականի բարձրացմանը,վարքի կանոնակարգմանը,վախերի

հաղթահարմանը, ծնող-երեխա փոխհարաբերություններում դրական հուզական կապի ձևավորմանը և ամրապնդմանը:

Անհրաժեշտության դեպքում եղել են հավելյալ խորհրդատվությունների տրամադրում խելամիտ հարմարեցումների սահմանման և ձեռքբերման շուրջ,ԱՈւՊ-ների լրացման ժամանակ,որոնք էլ նպաստել են պլանավորված խորհրդատվությունների թվի և օգտված անձանց քանակի ավելացմանը:

## 5. Մշտադիտարկում

ՏՄԱԿ-ի կողմից 2026թ-ի հունվար-հունիս ամիսների ընթացքում կատարվել են 69 մշտադիտարկումներ,45-ը՝ դպրոցներում և 24-ը՝ ՆՈՒՀ-երում:

- ԿԱՊԿ և ԿԶԱՊԿ գնահատման գործընթացի մշտադիտարկում:
- Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մշտադիտարկում:
- Ուսումնական գործընթացի և միջավայրային հարմարեցումներ:
- Ծնող-ուսուցիչ-դպրոց համագործակցություն
- ԿԱՊԿ և ԿԶԱՊԿ երեխաների առկայության բացահայտում: Ներառական կրթության աջակցող աշխատանքների իրականացում:
- Հաստատության հոգեբանի գործունեությունը
- Ուսումնական գործընթացի ներառականության
- Ծնող-դաստիարակ-ուսումնական հաստատության համագործակցություն

## 6. Խելամիտ հարմարեցումներ

Հաշվետու ժամանակաշրջանում տարածաշրջանի 5 ՆՈՒՀ-երում և 27 դպրոցներում մասնակի կամ ամբողջական ձևով թվով 280 սովորող /267-ը դպրոցում,13-ը ՆՈՒՀ-ում/ ապահովվել է ԱՈՒՊ -ով նախատեսված խելամիտ հարմարեցումներով :

## 7. Համագործակցություն

Ստեփանավանի ՏՄԱԿ-ը ունի և ընդլայնում է շարունակական համագործակցությունը տարբեր կառույցների հետ:Հաշվետու ժամանակահատվածի կատարված աշխատանքներն են.

- Համագործակցություն Terapists for Armenia-ի հիմնադիր Ա.[illegible] հետ,ով պարբերաբար խրախուսում է վերապատրաստման դասընթացներ և գրենական հարմարեցված միջոցներ տրամադրում ՏՄԱԿ-ին:
- Համագործակցություն Սոֆյան Շահումյանի տուն-թանգարանի հետ' <<[illegible]>> գրքի շնորհանդեսի կազմակերպչական աշխատանքներում
- Համագործակցություն Ստեփանավանի և Տաշիրի համայնքային սոցիալական աշխատողների հետ' շահառու անձանց և [illegible] դուրս մնացած երեխաների հայտնաբերման,նրանց հետ տարվող աշխատանքների շուրջ:
- Համագործակցություն համայնքի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի հետ,ակտիվ մասնակցություն ժողովներին,քննարկումներին:
- Համագործակցություն <<Կյանքի ճանապարհ>> բարեգործական ՀԿ-ի հետ:
- Համագործակցություն <<Teach for Armenia >> կրթական հիմնադրամի հետ

| | |
|---|---|
| Կենտրոնի անվանումը՝ | <<Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն >>ՊՈԱԿ |

Տնօրեն՝ Անի Պապյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«01 » 07«» 2026թ.